373 Տեր իմ, կաղաչեմ ու կպաղատեմ,

1. Տեր իմ, կաղաչեմ ու կպաղատեմ,
Իմ հույսի միակ աղբյուրը Դու ես, Տեր,
Տատանյալ եմ, Տեր, ձեռքս պինդ բռնիր,
Լողալ չգիտեմ, Տեր, կընկղմեմ:
Ով Հիսուս Փրկիչ, ամեն,
Հիշիր, որ ես մարդ եմ, Տեր,
Ինձ մխիթարիր, այո՛,
Միակ հույսս Դու ես, Տեր (ալելուիա՛):

2. Ինչո՞ւ կը ցածնաս, անհանգիստ կ՚ըլլաս,
Ով իմ անձս, բա՛ց արա աչքերդ հուսո,
Ինչո՞ւ կը տրտմես ու կը շփոթվես,
Ով իմ անձս, ինչո՞ւ կտխրես:
Փառք տուր Աստծուն, ամեն,
Հիսուսի անվամբ կանչիր,
Նրանից խնդրիր, այո՛,
Մի փոքրիկ, մաքուր, ջերմ լույս (ալելուիա՛):

3. Ինչո՞ւ կխորհես, թե մենակ ես դու,
Ով իմ անձս, ինչո՞ւ հուսահատ կըլլաս,
Մոռցա՞ր Հիսուսին՝ խաչին վրա գամված.
«Հա՛յր, Քո ձեռքդ կավանդեմ հոգիս»:
Ով Հիսուս Փրկիչ, ամեն,
Հիշի՛ր, որ ես մարդ եմ, Տեր,
Ինձ մխիթարիր, այո՛,
Միակ հույսս Դու ես, Տեր, (ալելուիա՛):

4. Ինչո՞ւ կնայես դուն մութ ամպերուն,
Ով իմ անձս, մի՛ մոռցիր, արև էլ կա,
Ամեն ցավ կանցնի ու կմոռացվի,
Արշալույսը շուտով կբացվի:
Փառք տուր Աստծուն, ամեն,
Հիսուսի անվամբ կանչիր,
Նրանից խնդրիր, այո՛,
Մի փոքրիկ, մաքուր, ջերմ լույս (ալելուիա՛):